ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 11 փետրվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով Լիլիթ Մուսեյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Լիլիթ Մուսեյանը 01.02.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ պարբերության՝ ՀՀ Սահմանադրության 65, 66 եւ 71-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Ըստ դիմողի՝ իր համար «բացասական իրավական հետևանք է առաջացրել Վերաքննիչ դատարանի կողմից թիվ ՎԴ/8455/05/13 գործով 20.05.2015թ. որոշմամբ կիրառված և դրանում անմիջականորեն վկայակոչված՝ ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգր-

քի 32-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը», որը հակասում է ՀՀ Սահմանադրության 65, 66 եւ 71-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի բավարարում իրավական որոշակիության պահանջները՝ առաջացնելով սահմանադրաիրավական բացասական հետեւանքներ:

Ըստ դիմողի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը «համապատասխանում են քրեական մեղադրանք հասկացությանը»: Վարչական տույժը պատասխանատվության միջոց է, այն կիրառվում է օրենքները պահպանելու ինչպես իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը կանխելու նպատակով, ինչն էլ հիմք է պնդելու, որ վարչական պատասխանատվության ենթարկելիս անհրաժեշտ նախապայման է, որ վարչական մարմինը հիմնավոր ներկայացնի կատարված իրավախախտման բնույթը, զանցանք կատարողի անձը, մեղքի աստիճանը, գույքային դրությունը եւ այլն:

Վերոթվարկյալ հանգամանքները կարեւորելով՝ դիմողն ընդգծում է, որ իր նկատմամբ, ի թիվս այլնի, բացասական իրավական հետեւանքներ են առաջացել այն առումով, որ ինքն անհիմն մեղադրվում է զանցանքի կատարման մեջ, քանի որ չի ցանկանում ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավորի վերաբերյալ:

Միաժամանակ, դիմողը միջնորդություն է ներկայացրել պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ առկա չեն Լիլիթ Մուսեյանի դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Լիլիթ Մուսեյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ պարբերության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Լիլիթ Մուսեյանին ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

11 փետրվարի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-5